«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»
պետական հիմնարկ
“Environmental project implementation unit”
state institution
“Бюро по реализации экологических программ”
государственное учреждение

0005, ք. Երևան, Տիգրան Մեծ 65Ա
65 A. Tigran Mets Ave., Yerevan, 0005, Armenia
0005, Пр. Тиграна Меца 65 А, Ереван, Армения
☏(+ 37410)651-631
http://www.epiu.am/
Էլ.փոստ /E-mail/ эл. почта info@cep.am

№ 1-06/27Ա/08

«09» հունվարի 2024թ.

<<Վարարակ Մարքեթինգ Կոմպանի>> ՍՊԸ-ի
տնօրեն Ա.Բարխուդարյանին

<<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի և <<Վարարակ Մարքեթինգ Կոմպանի>> ՍՊԸ-ի միջև 07.05.2024թ. կնքված ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-24/31-2 ծածկագրով պայմանագրի 4-րդ չափաբաժնի և 22.06.2024թ. պայմանագրին կից համաձայնագրի համաձայն պետք է մատուցվեր Գովազդային ծառայություններ /Վիդեո նյութերի պատրաստում: Պայմանագրի գնման ժամանակացույցով ծառայության մատուցման վերջնաժամկետը սահմանվել էր 2024 թվականի դեկտեմբերի 20-ը: Սակայն Ձեր ընկերությունը այն չի իրականացրել:

Հիմք ընդունելով պայմանգրի 2.1.3 կետը <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը միակողմանի լուծում է պայմանագիրը՝ 4-րդ չափաբաժնի գծով:

Համաձայն ընթացակարգի հրավերի 8.14-րդ կետի

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված

մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասունօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ամփոփելով վերոգրայլը՝ Ձեզ է առաջարկվում վճարել պայմանագրի ապահովումը՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով, որը կկազմի 286000 դրամ և որակավորման ապահովումը՝ պայմանագրի գնի 15 տոկոսի չափով, որը կկազմի 429000 դրամ: Տվյալ վճարումների արդյունքում Ձեր ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով՝

<<ԲԾԻԳ>> ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Արմեն Եսոյան

Digitally signed by
YESOYAN ARMEN 3910800513
Date: 2025-01-09 13:02:47